ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **20/փետրվարի/2024 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...9... անդամներ:

Բացակա էին՝ Հ. Միրզոյանը, Ս. Մկրտչյանը, Հ. Հովհաննիսյանը, Ձ. Բաբայանը, Ս. Ալեքսյան

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, համայնքի գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներ Սևակ Մկրտչյանը և Արտակ Բագրատյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Արսեն Գառնիկյանը, առաջատար մասնագետի պաշտոնակատար Մոմիկ Մարգարյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Արմինե Ղազարյանը, համայնքապետարանում ուսումնական պրակտիկա իրականացնող Վանիկ Մկրտչյանը

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Սարգսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վարդան Սարգսյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի առաջին՝ 2024 թվականի փետրվարի 20-ի նիստի հետևյալ *օրակարգը*՝

1.1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 99-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.2. Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը սահմանելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի N 70-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.3. Ջերմուկ քաղաքի Մեծ Հոկտեմբերի 50-ամյակին նվիրված հուշարձանին կից գտնվող քաղաքային այգին անվանակոչելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4. Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցին կից նորակառույց այգին անվանակոչելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 107-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 100-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.7. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ա. Գառնիկյան

1.8. Դրամական օգնություն տրամադրելու և հատկացում կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնակատար Մ. Մարգարյան

1.9. Ջերմուկ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----9---- *Դեմ*----0------ *Չեռնպահ*----0--------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 4-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 99-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 34-րդ հոդվածով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «2024 թվականի համար Ջերմուկ համայնքի և համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» N 99-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետից հանել 3-րդ և 7-րդ ենթակետերը՝ հաշվի առնելով, որ «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ–ի կողմից համայնքի գյուղական բնակավայրերի հանդիսությունների սրահները օգտագործման տրամադրելու և ֆիթնես–մարզումների ծառայությունների մատուցման կարգավորումները կատարվում են գործողության մեջ գտնվող Ջերմուկ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 17-ի «Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի հանդիսությունների սրահի օգտագործման պայմանները սահմանելու մասին» N 25-Ա և 2020 թվականի մայիսի 26-ի ««Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ–ի կողմից մատուցվող ծառայությունների և դրանց դիմաց գանձվող դրույքաչափերի մասին» N 37-Ա որոշումներով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---- *Դեմ*----1---- *Չեռնպահ*----0----

Ա. Ավետիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 5-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 70-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի պահանջով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման իրականացման կարգը սահմանելու մասին» N 70-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------8---------- *Դեմ*----------1---------- *Ձեռնպահ*----------0----------

Ա. Ավետիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 6-Ն/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 50 -ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳԻՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան /

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի և 6-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի՝

1. Մեծ Հոկտեմբերի 50-ամյակին նվիրված հուշարձանին կից գտնվող քաղաքային այգին անվանակոչել հայազգի ռազմական և քաղաքական գործիչ, գրող Սպարապետ Վազգեն Սարգսյանի անունով՝ «Վազգեն Սարգսյանի անվան զբոսայգի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------7---------- *Դեմ*----------1---------- *Ձեռնպահ*----------1----------

Ա. Ավետիսյան Ա. Հովհաննիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 7-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑԻՆ ԿԻՑ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԱՅԳԻՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան /

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի՝

1. Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցին կից նորակառույց այգին անվանակոչել «Ազատամարտիկների պուրակ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---- *Դեմ*----1---- *Ձեռնպահ*----0----

Ա. Ավետիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 8-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 107-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Արմինե Ղազարյան/

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասին և 34-րդ հոդվածին համապատասխան՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Ջերմուկ համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին» N 107-Ա որոշման մեջ կատարել լրացում. որոշման մեջ ավելացնել 4.1 և 4.2 կետեր՝ հետևյալ բովանդակությամբ՝

«4.1. Համայնքի 2024 թվականի բյուջեից մասնակցային բյուջետավորմամբ ձևավորվող ծրագրերի իրականացման գծով նախատեսվող ֆինանսական միջոցների ընդհանուր ծավալը սահմանել 86,214.72 հազար ՀՀ դրամ (պետական բյուջեից մասնաբաժին 71,845.6 հազար ՀՀ դրամ, համայնքի կողմից՝ պետական բյուջեի մասնաբաժնի 20 տոկոս՝ 14,369,12 հազար ՀՀ դրամ), յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար անհրաժեշտ գումարի առավելագույն սահմանաչափը՝ 86,214.72 հազար (ութսունվեց միլիոն երկու հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ:

4.2. Սահմանել առաջարկ-նախագծերի համար պահանջվող հետևյալ չափանիշները՝

1) առաջարկ-նախագծերը չպետք է համընկնեն համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված այլ ծրագրերի հետ,

2) առաջարկ-նախագծերը պետք է բացառապես վերաբերվեն Ջերմուկ համայնքին, բխեն համայնքի խնդիրներից, իսկ դրանց իրագործումը լինի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակներում,

3) առաջարկ-նախագծերը պետք է իրագործելի լինեն 2024 թվականի բյուջետային տարվա ընթացքում,

4) առաջարկ-նախագծերի իրականացման համար անհրաժեշտ նախահաշվային գինը չպետք է գերազանցի մասնակցային բյուջետավորմամբ ձևավորվող ծրագրերի իրականացման գծով նախատեսվող պետական և համայնքային ֆինանսական միջոցների առավելագույն ընդհանուր ծավալը:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ----------7---------- *Դեմ*----------2---------- *Ձեռնպահ*----------0----------

Ա. Ավետիսյան
Ա. Հովհաննիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 9-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 100-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Արմինե Ղազարյան/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 3-Ա և 2023 թվականի ապրիլի 21-ի N 39-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 100-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման հավելվածում՝

1) «ՋԱՏԻԿ» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում՝

ա. 3-րդ տողի «Դրույքի չափը (դրամ)» և «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակներում «130000» թիվը փոխարինել «223520» թվով,

բ. 11-րդ տողի «Դրույքի չափը (դրամ)» սյունակում «119000» թիվը փոխարինել «195520» թվով, իսկ «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «59500» թիվը փոխարինել «97760» թվով,

գ. «Ընդամենը» տողի «Դրույքի չափը (դրամ)» սյունակում «3327920» թիվը փոխարինել «3497960» թվով, իսկ «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «5293220» թիվը փոխարինել «5425000» թվով:

2) «Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում՝

ա. 3-րդ տողի «Դրույքի չափը (դրամ)» սյունակում «130000» թիվը փոխարինել «175520» թվով, իսկ «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «32500» թիվը փոխարինել «43880» թվով,

բ. 14-րդ տողի «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «119000» թիվը փոխարինել «59500» թվով,

գ. «Ընդամենը» տողի «Դրույքի չափը (դրամ)» սյունակում «1996920» թիվը փոխարինել «2042440» թվով, իսկ «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «1237260» թիվը փոխարինել «1189140» թվով:

3) «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում՝

ա. *«Վարչական մաս»* հատվածի 6-րդ տողի «Հաստիքային միավորը» սյունակում «1» թիվը փոխարինել «1,5» թվով, «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «221206» թիվը փոխարինել «331809» թվով, «Ընդամենը» տողի «Հաստիքային միավորը» սյունակում «11,5» թիվը փոխարինել «12» թվով, իսկ «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «2174328» թիվը փոխարինել «2284931» թվով:

բ. *«Ըմպելասրահի գարաժքի սպասարկում»* հատվածի 2-րդ տողի «Հաստիքային միավորը» սյունակում «1,5» թիվը փոխարինել «1» թվով, «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «178500» թիվը փոխարինել «119000» թվով, «Ընդամենը» տողի «Հաստիքային միավորը» սյունակում «3» թիվը փոխարինել «2,5» թվով, իսկ «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «357000» թիվը փոխարինել «297500» թվով,

գ. *«Համայնքի կանաչ գոտիների, քաղաքային զբոսայգիների սպասարկում, բարեկարգում»* հատվածի 4-րդ տողի «Հաստիքային միավորը» սյունակում «5,5» թիվը փոխարինել «5» թվով, «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «654500» թիվը փոխարինել «595000» թվով, «Ընդամենը» տողի «Հաստիքային միավորը» սյունակում «11,5» թիվը փոխարինել «11» թվով, իսկ «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «1506706» թիվը փոխարինել «1447206» թվով,

դ. «Ընդհանուրը» տողի «Հաստիքային միավորը» սյունակում «71,5» թիվը փոխարինել «71» թվով, իսկ «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակում «10253410» թիվը փոխարինել «10245013» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի մարտի 1-ից:

Կողմ----7---- Դեմ----1---- Ձեռնպահ----1----

Ա. Ավետիսյան Ա. Հարությունյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Արսեն Գառնիկյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի N 22/4 հասցեում գտնվող 10-002-0032-0130 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 03012024-10-0023) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,0035 հա) հասարակական նշանակության օբյեկտ կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 105 000 (հարյուր հինգ հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7---- Դեմ----2---- Ձեռնպահ----0----

Ա. Ավետիսյան
Ա. Հովհաննիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Մոմիկ Մարգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 52-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2024 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի հետևյալ բնակիչներին՝

Երվանդ Գրիգորյանին՝ 100 000 (հարյուր հազար) դրամ

Վարդիթեր Մովսիսյանին՝ 300 000 (երեք հարյուր հազար) դրամ

Գյուլվարդ Գասպարյանին՝ 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամ

Գարիկ Խանամիրյանին՝ 300 000 (երեք հարյուր հազար) դրամ

2. Հաշվի առնելով Ջերմուկի քաղաքի «Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց» պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրենի դիմում-խնդրանքը՝ Ջերմուկ համայնքի վարչական բյուջեից «9-2-2-51 - հիմնական ընդհանուր կրթություն» գործառնական դասակարգմամբ «4637- ընթացիկ դրամաշնորհներ պետական կամ համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով 2023-2024 թթ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար դպրոցին հատկացնել 1228800 /մեկ միլիոն երկու հարյուր քսանութ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ՝ Ջերմուկ քաղաքի տարբեր թաղամասերից աշակերտների տեղափոխումը կազմակերպելու նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---------- *Դեմ*----1---------- *Ձեռնպահ*-----0------

Ա. Ավետիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի մարտի 20-ին, ժամը՝ 15.00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----9---------- *Դեմ*----0---------- *Ձեռնպահ*----0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	

Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	բացակա
Մկրտչյան Մարինե Մայիսի	բացակա
Բաբայան Ժիրայր Ժորայի	բացակա
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	բացակա
Հովակիմյան Ազատ Հայրիկի	
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	

Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝

Վարդան Սարգսյան _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը՝ _____

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ • ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶ • RA VAYOTS DZOR REGION JERMUK MUNICIPALITY • Հեռ.+0891756 3